ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____2018թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 225-րդ և 685-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N.87-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Մոլդովական փողոցի հ.29/4 շենքի հ.18՝ 34.6քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 31.01.2018թ. հ.31012018-01-0118 վկայական) անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Վիրաբ Ավետիքի Շաբոյանին, Աննա Գրիգորի Ասլանյանին, Վարդիթեր Վիրաբի Շաբոյանին, Սաթենիկ Վիրաբի Շաբոյանին, Մանե Վիրաբի Շաբոյանին, Նարե Վիրաբի Շաբոյանին, Հակոբ Վիրաբի Շաբոյանին, Սողոմոն Վիրաբի Շաբոյանին, Էռնեստ Վիրաբի Շաբոյանին, Մանուկ Վիրաբի Շաբոյանին, Անի Վիրաբի Շաբոյանին, Միլենա Վիրաբի Շաբոյանին, Մարիա Վիրաբի Շաբոյանին, Մոնթե Վիրաբի Շաբոյանին, Ավետիք Վիրաբի Շաբոյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոցի հ.29/4 շենքի հ.18՝ 34.6քմ մակերեսով բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Վիրաբ Շաբոյանի 15 անձից բաղկացած ընտանիքին:

Մոլդովական փողոցի հ.29/4 շենքի հ.18՝ 34.6քմ մակերեսով բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 31.01.2018թ. հ.31012018-01-0118 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Քաղաքացի Վիրաբ Շաբոյանը, կնոջ՝ Աննա Ասլանյանի և տասներեք երեխաների /11-ը անչափահաս/ հետ բնակվել են այլ հասցեում վարձակալական հիմունքներով, սակայն 2017 թվականից բնակարանի համար վարձակալության վճար կատարելու հնարավորության բացակայությամբ պայմանավորված բնակություն են հաստատել Մոլդովական փողոցի հ.29/4 շենքի պետական սեփականություն հանդիսացող բնակության համար չնախատեսված նկուղային տարածքում:

Քաղաքացի Վիրաբ Շաբոյանը հանդիսանում է 1990-1993թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ սահմանների և Արցախի պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակից:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Վիրաբ Շաբոյանի և Աննա Ասլանյանի անվամբ Երևան քաղաքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի հ.87-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 41-րդ կետի 4-րդ ենթակետի:

Ծրագրի 41-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով բազմանդամ ընտանիքի բնակարանային պայմանների խիստ կարիքավոր հանդիսանալու հանգամանքը, ինչպես նաև Վիրաբ Շաբոյանի անցած մարտական ուղին մշակվել է Մոլդովական փողոցի հ.29/4 շենքի հ.18՝ 34.6քմ մակերեսով բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով վերջինիս ընտանիքին տրամադրելու վերաբերյալ Երևանի ավագանու որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ